ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Ք.Երևան 26.12.2017թ. ժամը 12:00

Մասնակցում էին.
Հ.Սերխոշյանը - հանձնաժողովի նախագահ
Ք.Ղասումյանը- հանձնաժողովի անդամ
Ս.Զաքարյանը - հանձնաժողովի անդամ
Հանձնաժողովի քարտուղար - Գ.Սարգսյանը

<ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին.
(Գ.Սարգսյան)

1.1. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը գնահատել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

1.2. Հանձնաժողովը գնահատելով Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերը (տեղեկությունները) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված հրավերի թիվ 5.2 հավելվածով՝ առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալների:

1.3.<<Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների>> աշխատանքային փորձը սյունակի 1-ին,2-րդ, 18, 20 և 21-րդ տողերի տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս հանձնաժողովին որոշելու այդ աշխատողների հրավերով պահանջվող պահնորդական ծառայության առնվազն 6 ամսվա աշխատանքային փորձի առկայությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

1.4. Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 - Ն որոշման N 1 Հավելվածով հաստատված Գնումների կազմակերպման կարգի 47-րդ կետով, ընդունել է որոշում ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հանձնաժողովի կողմից՝ **հրավերի պահանջների նկատմամբ** արձանագրած **անհամապատասխանությունը:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը շարունակել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելուն /կամ չշտկելուն/ հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին՝ կենդանաբանական այգու վարչական շենքում /ք.Երևան, Մյասնիկյան 20/:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝		Հ.Սերխոշյան
Հանձնաժողովի անդամ՝		Ք.Ղասումյան
Հանձնաժողովի անդամ՝		Ս.Զաքարյան
Քարտուղար՝		Գ.Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

<ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Ք.Երևան 27.12.2017թ. ժամը 12:00

Մասնակցում էին.
Հ.Սերխոշյանը - հանձնաժողովի նախագահ
Ք.Ղասումյանը- հանձնաժողովի անդամ
Ս.Զաքարյանը - հանձնաժողովի անդամ
Հանձնաժողովի քարտուղար - Գ.Սարգսյանը

<ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին.
(Գ.Սարգսյան)

1.Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց հրավերի պահանջների համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին:

2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

1.1. ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <Ֆիլյոր>> ՍՊԸ-ի հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 - Ն որոշմամբ հաստատված Գնումների կազմակերպման կարգի 44-րդ կետով նածատեսված եզրակացության համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջները առկա են:

1.3. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որոկավորման հատկանիշները գնահատել ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և <Ֆիլյոր>> ՍՊԸ-ին հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4.Հանձնաժողովը որոշեց հաստատել ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը և հրապարակել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-18/01> ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստ հրավիրել գնման պայմանագիրը կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը՝ ժամը 12:00-ին, այգու վարչական շենքում :

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝		Հ.Սերխոշյան
Հանձնաժողովի անդամ՝		Ք.Ղասումյան
Հանձնաժողովի անդամ՝		Ս.Զաքարյան
Քարտուղար՝		Գ.Սարգսյան